



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

14 փետրվարի 2018թ. թիվ 14

Ա. ՀԱԿՈՒՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ  
ՄՆԱՑԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 163 հոդվածի, ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2017 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 316 կարգադրությունը և հաշվի առնելով Ա.Հակոբյանի դիմումը՝

Կ ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ էՄ.

1. «Աքորու առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Ադունիկ Հակոբյանին տրամադրել 2018 թվականի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի մնացած մասը ս/թ փետրվարի 14-ից 27-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր:

2. Ա. Հակոբյանի արձակուրդում գտնվելու ժամանակ «Աքորու առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել «Արևածագի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի ընտանեկան բժիշկ Օֆելյա Գևորգյանի վրա:

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2018թ. փետրվարի 14  
ք.Վանաձոր